«Էդիտ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Բնությունը և մարդը Համո Սահյանի ստեղծագործություններում

Առարկա՝ Հայոց լեզու, գրականություն

Ուսուցիչ՝ Ստելլա Մանուչարյան

Դպրոց՝ Երևանի Խ. Սամուելյանի անվան հ.47 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Բնությունը և մարդը Համո Սահյանի ստեղծագործություններում 4

Եզրակացություն 17

Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Բնությունը մեծ դեր ունի 19-20-րդ դարերի հայ բանաստեղծների ստեղծագործություններում: Նրանց աշխարհում մարդու կյանքը և բնության տարերքը համահունչ են, փոխկապված. դա միասնական ապրող ու շնչող կենսագոյություն է: Բնությունն է տնօրինում մարդկանց ճակատագիրը, մարդը ձուլված է բնությանը, նաև մաքառում է նրա դեմ, նվաճում իր կենսական իրավունքը: Բնությունն ու մարդը ենթարկվում են միևնույն բիրտ օրենքներին: Մարդը բնության զավակն է. խաթարվում է բնությունը, խաթարվում է և մարդը: Մարդը բնությունից է քաղում իր հոգևոր գեղեցկությունները, ապրումները, հաղորդակցվում բնությանը: Բնաշխարհն է ձևավորում մարդկանց հոգեբանությունը: Գլխավոր նախապայմանը բնության ակունքներին մոտ լինելն է: Հայ հոգևոր մշակույթի շրջանակներում բնության նկատմամբ ձևավորվել է հատուկ բանաստեղծական վերաբերմունք... Համո Սահյանի ստեղծագործության մեջ մեծ ու հաստատուն տեղ է գրավում բնությունը, այնքան մեծ, որ բանաստեղծի արժևորման անբաժան մակդիրն է դարձել «բնության երգիչ» անվանումը: Մեծ է նրա դերը հայ գրականության զարգացման բնագավառում: Նրա թողած ժառանգությունն ունի իր արժեքավոր և առանձնահատուկ տեղը հայ գրականության պատմության մեջ:

Այսօր համաշխարհային մակարդակի խնդիր է դարձել էկոլոգիայի պահպանությունը: Մարդը, սեփական շահի հետևից ընկնելով, անխնա փչացնում, աղտոտում կամ պարզապես վերացնում է բնությունը, որից մեծապես կախված է առաջին հերթին հենց իր կյանքը: Մի տեսակ մարդիկ հեռացել են իրարից ու բնությունից: Այս փոխհարաբերություններում շատացել է կեղծիքը, սուտը, դաժանությունը...

Սահյանի ստեղծագործությունների ընթերցումը կարծես ստիպում է մարդուն վերանայել իր վերաբերմունքը թե՛ մարդու, թե՛ բնության նկատմամբ և վերանայել հիմնովին, քանի որ բնությունը կյանք է առնում Սահյանի գրչի տակ, անձնավորված զրուցում մարդու հետ, ընդունելով մարդուն, իմաստավորվում է ու մարդկայնանում, իսկ մարդը, ձուլվելով բնությանը, հաստատում է իր մեջ մարդկայինը, մարդասիրականը: Համո Սահյանի ստեղծագործության վերլուծությունը, կարծում ենք, ինչ-որ տեղ կստիպի մարդկանց փոխել կամ գոնե վերանայել իրենց ունեցած վերաբերմունքը բնության հանդեպ, իրենց մեջ տեսնել բնություն, և բնության մեջ տեսնել իրենց: Մարդը բնության մասնիկն է. ուր էլ գնանք, ինչ էլ անենք, միևնույնն է, առանց բնություն գոյություն ունենալ չենք կարող:

Մեր դարի մարդը հաճախ կորցնում է բնության հետ անքակտելի կապի զգացումը և դրանով իսկ աղքատացնում իր էությունը, իսկ բնությունը, զրկվելով մարդու ուշադրությունից ու ջերմությունից, որբանում է, մնում մեն-մենակ:

Հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանի քնարերգությանը նվիրված սույն աշխատությունը նպատակ ունի՝

1. Բացահայտել նրա ստեղծագործությանը բնորոշ մի շարք առանձնահատկություններ, գեղարվեստական կարևոր և ինքնատիպ օրինաչափություններ, ինչպես նաև գրականություն բերած այն ավանդականն ու նորը, որոնք, միմյանց հետ կապակցվելով, հայրենի գրականության մեջ դարձել են բանաստեղծական ուղղություն և դպրոց:
2. Աշակերտի մոտ զարգացնել գեղարվեստական ճաշակը և պատկերավոր մտածողությունը:
3. Սեր արթնացնել բնության և մարդ տեսակի հանդեպ, օգնել, որ աշակերտը զգա այդ անխզելի կապը: Տարանջատելով այդ կապը՝ ցույց տալ այն փաստը, որ առանց այդ կապի անհնար կլինի մարդու, և անիմաստ՝ բնության գոյությունը:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անձնավորված, մարդացած բնություն և բնական մարդ. ահա իմ հավատո հանգանակը կյանքում և արվեստի մեջ:

Համո Սահյան

Լինելով հայ դասական բանաստեղծության ավանդների հավատարիմ շարունակողը՝ Սահյանը թարմացրեց այդ ավանդները և նոր ու ժամանակակից բովանդակություն հաղորդեց դասական ձևերին: Նա ստեղծեց քարափների, ջրվեժների ու ծիածանների մի գունագեղ աշխարհ, ուր ապրող մարդը ևս օժտված է իրեն ծնող միջավայրի վեհությամբ ու խորությամբ: Սահյանի՝ փիլիսոփայական ենթատեքստով և բնաշխարհի գույներով հարուստ ստեղծագործությունը ներկայացնում է 20-րդ դարի բազմաշերտ հայ պոեզիայի մի որոշակի ուղղություն: Լինելով հայ դասական բանաստեղծության ավանդների հավատարիմ շարունակողը՝ Սահյանը թարմացրեց այդ ավանդները և նոր ու ժամանակակից բովանդակություն հաղորդեց դասական ձևերին: Աշխարհընկալման անմիջականությամբ, բանաստեղծական անկաշկանդ կեցվածքով, ասելիքի հստակությամբ ու դասական պարզությամբ Համո Սահյանն առաջնակարգ տեղ է գրավում հետչարենցյան շրջանի բանաստեղծության մեջ:
Մեծն Մարտիրոս Սարյանը իմաստնորեն ասել է. «Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ»: Համո Սահյանի պոեզիան դրա վառ արտահայտությունն է:
Այո՛, բնություն երգել են տարբեր ժամանակաշրջանների, տարբեր ազգությունների շատ բանաստեղծներ: Բնություն երգել են, թերևս, պոեզիայի ծնունդ առնելու օրից մինչև այսօր և երգել են տարբեր ձևով: Այդ բանաստեղծների մեջ կան այնպիսիք, որոնց, իրոք, կարելի է

անվանել «բնության երգիչ», քանզի նրանք ընկալում են բնությունը ու վերարտադրում այն սոսկ հայեցողաբար, երբեմն՝ բարձր բանաստեղծական ներշնչումով ու վարպետությամբ (որպես օրինակ կարող ենք նշել Վահան Տերյանի ստեղծագործություններից մի քանիսը):
Համո Սահյանին ամենևին հնարավոր չէ դասել այդ բանաստեղծների շարքը, թեև Սահյանն այնքան հաճախ է անդրադառնում բնությանը, այնքան լավ գիտի նրա լեզուն, այնքան մտերիմ է ու անբաժանելի իր մայր հողից, իր քարափներից ու ձորերից: Սակայն մի բան է որպես ստեղծագործ հմայվել բնության բազմապիսի ու զարմանահրաշ երևույթներով, հավերժ շարժման ու փոփոխման նրբերանգներով, մեծագույն հակասությունների ներդաշնակությամբ և մնալ սղագրողի դերում (նույնիսկ տաղանդավոր), այլ է՝ այդ ամենի մեջ փնտրել դարաշրջանի փիլիսոփայությունը, այսօրվա մարդու հոգեբանությունը և, ի վերջո, ձգտել այն կատարելությանն ու ներդաշնակությանը, որի մարմնավորումն է բնությունը: Բանաստեղծը երկար ճանապարհ է անցել՝ իրեն բնության մի մասնիկն զգալու և նրա հետ ու նրա միջոցով հավերժելու համար: Ինչպես ինքը՝ Սահյանն է խոստովանել՝ սկզբում նա բնությունը տեսել-զգացել է իր միջոցով, ապա հասուն տարիներին ձգտել է իրեն հասկանալ բնության միջոցով: Սա մի ամբողջ թռիչք է նրա բանաստեղծական մտածելակերպի մեջ:
Սահյանը գնում է բնություն ո՛չ նրա գրկում ծվարելու, հասարակական կենսական հարցերից գլուխն ազատելու համար, ո՛չ բնապաշտության զգացումով համակված: Նա բնության մեջ փնտրում է նրա խորախոր իմաստները, հակասություններն ու մեծագույն ներդաշնակությունը, որոնք սթափեցնում են մարդուն, պայծառեցնում նրա միտքն ու հոգին: Բնությունը գրավում է Սահյանին ոչ որպես վերացական երևույթ, այլ միայն՝ մարդու առկայությամբ, նրա շնչով ու մտքով կյանք առած, նրա աչքերով հոգուն գեղեցկություն պարգևող:
Բանաստեղծն այնքան է միահյուսված բնությանը, որ վստահորեն հայտարարում է.

Աչքն ու ականջն եմ ես մայր բնության,
Գիտակցությունը նրա մարմնավոր,
Հասակակիցն եմ նրա հնության,
Եվ ծլարձակումը ու ծաղկումը նոր,
Նրա այս մի բուռ պատկերն ու նրա
Հավիտենության աղերսանքն եմ ես:

Բնությունն այն օրրանն է, որը անմահության հավատ է ներշնչում բանաստեղծին՝

Այս իմ աշխարհն է, և ես եմ նրա
Քարերից բուսած բանաստեղծ որդին,
Այստեղ սարեր կան սարերի վրա,

Եվ ծորերի մեջ ծորեր կան մթին, Ես
չեմ հավատում իմ մայրամուտին:

Եվ այդ հավատը, մահկանացու լինելու ստույգ գիտակցման առկայությամբ մահվան սարսափի հաղթահարումը՝ հավերժ բնությանը մերվելու ձգտումով, անքակտելի կապ է ստեղծում բնության հետ: Սակայն դա միակողմանի կապ չէ, այլ՝ փոխադարձ.

Ո՛վ մայր բնություն, իմաստուն ու վեհ,
Դու այդ բոլորը ինձ փոխ ես տվել,
Որ զգաս, տեսնես, շոշափես, լսես,
Պատճառաբանես քո անց ու դարձը,
Որ մարդուն հասնես,
Հասնես, մարդանաս, որ քո զորությամբ դու հպարտանաս:[1]

Այսպիսով, բանաստեղծը հիմնավորում ու ամրապնդում է մարդու ու բնության դաշինքը: Այդ դաշինքից երկու կողմն էլ մեծապես շահում են: Բնությունը ստանում է «հնարավորություն» մարդու աչքերով ինքն իրեն նայելու, իր գոյությունը իմաստավորելու, իր գեղեցկությունն ու զորությունը զգալու, մի խոսքով՝ «մարդանալու»: Իսկ մարդը լայնացնում է իր հոգեկան աշխարհը, իրեն բնության արգասիք զգալով ինչ-որ չափով անմահության զգացում է ապրում և, ի վերջո, կատարելության ձգտելով, ջանում է ընկալել բնության ներդաշնակությունը: Բնության հետ մարդու առնչությունների սահյանական համակարգում բանաստեղծականացվել և մարդկային զգացողությունների հսկայական իմաստ ու բովանդակություն են ստացել բնության մեջ եղած բոլոր առարկաներն ու երևույթները, քանի որ ինքն էլ այդ ընտանիքի անդամն էր՝ որդին, եղբայրը, գործընկերը…
Փորձենք այդ բազմանդամ ընտանիքի նկարագիրը որոշող մի շարք խորհրդանիշների օրինակով ցույց տալ Սահյանի բնական երևույթների ըմբռնման սկզբունքների ամբողջությունը: Որոտանը, որ Սյունիքի մայր գետն էր, Համո Սահյանի առաջին բանաստեղծությունների հետ մտել է նրա բանաստեղծական աշխարհը և մնացել մինչև վերջ: Պատահական չէ, որ նրա «Հայաստանը երգերի մեջ» շարքը բացվում է «Որոտան» բանաստեղծությամբ, որը տպագրվել է դեռևս 1939թ.: Պատահական չէ նաև, որ նրա առաջին ժողովածուն վերնագրվել է «Որոտանի եզերքին» (1946թ.): Այն կազմված է ռազմաճակատում գրված գործերով, սակայն պատերազմի հերքումն էր՝ խաղաղ իրականության պատկերներով: «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությունը համակված է «Որոտանի եզերքին» թողած հարազատների ու հայրենի եզերքի կարոտով.

[1] *Հ. Սահյան– Կանչե, կռունկ, «Դուփոխեստվել», Երևան, 1973 թ., էջ 270*

Նազում ես ու շորորում զմրուխտե քո շորերում,
Շուք արած ճամփիի վրա մանկության կանաչ արտի,
Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ձորերում,
Իմ հեռու՛, հեռու՛ նաիրյան դալար բարդի:

Բանաստեղծության միայն վերջին քառատողն է հիշեցնում պատերազմի մասին, ուր բանաստեղծը շեշտում է հայրենիքի համար զոհվելու իր պատրաստակամությունը.

Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռու՛, հեռու՛ նաիրյան դալար բարդի:

Որոտանի եզերքը Սահյանին շնորհել էր հոգու անսպառ գանձեր, նրա բանաստեղծությանը հաղորդել շքեղ ու շռայլ գույներ: Այդ եզերքը այն մտերմիկ անկյունն է, որի հետ մենության մեջ անկեղծ ու ջերմ զրույցի է նստում բանաստեղծը: Զմրուխտե հեռուները, իրար մեջ ագուցված լեռների ու կիրճերի ստվերները, իր «մանկության ոտնատեղերից անձրևաջուր» խմող եղնիկ-եղջերուները, այն բարձունքները, «ուր մարդն ամպերին վերից է նայում», «վերից է նայում արծվի ճախրանքին», հազար ձայնով կանչում են բանաստեղծին: Նրանց կանչին ականջալուր՝ Սահյանը գունագեղ ու խոսուն պատկերներով կերտում է հայրենի բնության ու նրա մարդկանց բանաստեղծական կերպարները: Բնությունը նրա բանաստեղծության հողն է, պատվանդանն ու զինանոցը, որտեղից գրողը վերցնում է իր պատկերները, գույներն ու ձևերը:
«Բնությունը հասկանալու համար պետք է շատ մոտ լինել մարդուն, և այդ ժամանակ բնությունը հայելի կլինի, որովհետև մարդը բովանդակում է իր մեջ ամբողջ բնությունը», - գրում է Միխայիլ Պրիշվինը՝ ռուս գրականության մեջ բնության ամենամեծ գիտակը:
Սահյանը մոտ է կանգնած բնությանը, սակայն առավել մոտ է նրա հոգուն մարդը՝ իր վշտերով ու հույզերով, թռիչքներվ ու անկումներով, երկմտանքով ու սխրանքներով.

Դու հողածին, դու և աստված,
Դու և հաղթող, դու և պարտված,
Դու անտակ վիհ, դու և բարձունք:
Դու բնության անքննելի,
Եվ բնության մի պատառիկ,
Դու հնություն հնամենի
Ու դեռ գալիք:[2]

Բնություն և մարդ՝ սա է Սահյանի բանաստեղծական տարերքը: Սահյանը մարդկայնացնում է

[2] *Հ. Սահյան - «Կանչե , կռունկ», «Մարդ», Երևան, 1973թ. Էջ 354*

բնությունը՝ նրա մեջ տեսնելով մարդկային էության դրսևորումները, և ձգտում է բնության երևույթների միջոցով արտահայտել մարդկային կյանքը: Մարդը, վերափոխելով մայր բնությունը, կատարելագործելով այն, ինքն էլ վերափոխվում ու կատարելագործվում է: Սահյանը գտնում է, որ միայն մարդու և բնության ներդաշնակ միասնության մեջ է մարդու զորությունը և հոգևոր հարստությունը.

Եվ ի՞նչ է տվել ինձ բնությունը,
Իր քարափների համբերությունը,
Իր խղճի առաջ իր գերությունը,
Իր անդունդների տարողությունը,
Սեփական վերքերն ապաքինելու կարողությունը …[3]

Մարդը ձուլվում է բնությանը և հաստատում է իր մեջ մարդկայինն ու մարդասիրականը:
Բանաստեղծը հիմնավորում ու ամրապնդում է մարդու և բնության դաշինքը:
Անխզելի կապ ստեղծելով բնության և մարդու միջև՝ Սահյանը մտերմորեն զրույց է անում նրա հետ, պատմում իր խոհերը, իր երկմտանքները, հարցեր տալիս ու սպասում պատասխանի.

Աշխարհն իմ մեջ է, և ես՝ աշխարհի,
Զրույց ենք անում աշխարհը և ես,
Եվ ոչ ոք չկա, որ մեզ խանգարի,
Եվ ոչինչ չկա, որ խանգարի մեզ:[4]

Երբեմն բանաստեղծը հենակետ է ընտրում շնչավորված բնությունը՝ չբացելով փակագծերը և ընթերցողին թողնելով բնապատկերի վերծանությունը:
Սահյանի բնափիլիսոփայության մեջ մարդը տիեզերքի մի հյուլեն է, բնության մի մասնիկը, որն ապրում է նույն բնության օրինաչափություններով և ունի նրա հատկությունները: Բամաստեղծի համար իդեալը մարդու և բնության ներթափանցումն է միմյանց մեջ, փոխադարձ հարստացումն ու փոխակերպումը մեկը մյուսով.

Լցված աշխարհքով ու տիեզերքով,
Խոր գիշերվա մեջ
Թափառում եմ ես գետի եզերքով:
Հալվում եմ, հյուսվում բնությանը մեծ,
Կարծես թե ես գետ, գետն է բանաստեղծ,

[3]Հ. Սահյան - «Կանչե, կռունկ» էջ 34

[4]Հ. Սահյան - «Քարափների երգը» Երևան 1968թ

Եվ թափառում է գետն իմ եզերքով -
Լցված աշխարհքով ու տիեզերքով: *(«Գետի եզերքով»)*

Եթե անգամ մարդը մեծ ամբողջի մի մասն է, բայց նա մահկանացու է, իսկ բնությունը՝ անմահ ու հավիտենական: Դիմելով քարափներին՝ Սահյանի քնարական հերոսը խոստովանում է, որ ինքը քարափների շուրթերի վրա «սարսուռ ու դող է», ձյունի փափուկ մի փաթիլ, մի կաթիլ ցող է», այսինքն ուզում է ասել, որ բնության հավիտենականության կողքին մարդու գոյությունը ակնթարթային է: Իր մեծ նախորդի՝ Հովի. Թումանյանի նման, նա ևս համոզված է, որ մարդն անմահանում է բնությանը ձուլվելու միջոցով: Սահյանի պոեզիայում բնությունը ոչ միայն ձևավորում է մարդու կերպարը, այլև դառնում է այն հարազատ գիրկը, որի մեջ անէանում ու տարրալուծվում է մարդը և դրանով իսկ անմահանում, քանի որ շարունակում է իր գոյությունը բնության տարրերի ու երևույթների ձևով.

Ես գնամ նորից ինձ որոնելու
Բոլոր բույրերի ու գույների մեջ,
Շշուկների մեջ անվերծանելի,
Եվ տատրակների վայ-վույների մեջ,
Եվ ծիծաղի մեջ ծիածանների,
Շամբուտների մեջ ու մացառների,
Սուրբ սևահողի մասնիկների մեջ,
Լուռ որոտի մեջ քարանձավների
Եվ մամուռների արցունքների մեջ: *(«Քո ձայնի վրա»)*

Բնաշխարհի հետ է կապվում նաև մարդու սահյանական իդեալը: Բնաշխարհում ապրող մարդը, որին դեռևս չի աղավաղել քաղաքակրթությունը, իր լեռնաշխարհի նման անդունդ, խոր հոգի ունի, սարերի նման վեհ սիրտ, սևահողի բարություն և բարոյական այնպիսի արժեքներ, որոնցից զուրկ է քաղաքակրթված մարդը: Այդ աշխարհում ապրող մարդկանց խորհրդանիշը կարող է լինել պապը՝ համանուն բանաստեղծության մեջ: Այդ պապը՝ Խաչիպապը, որի ձեռքի հետքը կա գյուղի բոլոր աշխատանքների մեջ, քանի որ նա է տնկել բոլոր ծառերը, ջրել է այգին ու տունը պահել է, ահա այդ պապը ոչ թե սովորական ձևով մահացել է, այլ վերադարձել է իրեն ծնող բնության գիրկը.

Եվ պապը ակոսում
Պառկել ու քնել է,
Խառնվել այն հողին,
Որ իրեն սնել է:

Պապի խորհրդանշային կերպարը, անունով (Խաչիպապ) կամ առանց անունի, անցնում է բանաստեղծությունից բանաստեղծություն և իրենով բնորոշում ավանդականն ու դրականը: Այդ կերպարին հանդիպում ենք նաև «Օրը մթնեց» բանաստեղծության մեջ.

Պապը գալիս սուփրի գլխին
Նստում էր շուքով,
Եվ լցվում էր տունը դաշտի
Բույր ու շշուկով...

Պապը, որ բնության մի բեկորն է, փոխադարձաբար իր հատկանիշներն է տալիս բնությանը: Սահյանի պոեզիայի գլխավոր կերպարը Հայաստանն է: Նույնիսկ բնության սովորական երևույթները այլ գույն ու երանգ են ստանում Հայաստանում, ուրիշ բնավորություն ունեն գետերը, քարափները, հաղարջի ու մոշի թփերը: Հայաստանի խորհրդանիշներն են բարդին ու փշատենին, ժայռերը, քարերը: Եվ դա պատահական չէ. քարափներն ու քարերը լինելով Հայաստանի բնության բնորոշ, ամենաբնորոշ երևույթները, նրա բնապատկերի անբաժանելի մասը, չէին կարող չկռել նաև հայ մարդու բնավորությունը: Քարը եղել է ոչ միայն պաշտամունքի առարկա, այլ նաև խաչքարերի տեսքով՝ արվեստի գլուխգործոցներ, վանքերի ու եկեղեցիների տեսքով՝ ճարտարապետական գոհարներ, ինչպես նաև կենսունակության ու հարատևության խորհրդանշան: Իր ստեղծագործական տաճարի զանգակատունը համարվող ժողովածուն Համո Սահյանը վերնագրել է «Քարափների երգը»՝ քարափի հավերժության մեջ տեսնելով նաև իր երգի ապագան: Եվ պատահական չէ, որ հրաժեշտի խոսքերը Սահյանն ասել է հենց քարափներին ու հենց նրանց էլ պատվիրել, որ իրեն բացակա չդնեն.

Ձեր լռությունը զնգում, զրնգում է ծորով մեկ,
Ձեր լռության համերգում ինձ բացակա չդնեք...
Համբերություն եմ ասում, ակնարկներս կրկնեք,
Համբերության հանդեսում ինձ բացակա չդնեք...
Ձեր շուրջը ամպ է, կայծակ, քնով չանցնեք, չքնեք,
Քնեցիք էլ, արթնացաք, ինձ բացակա չդնեք...
Թվում, է թե կամենաք մի օր երկինք կթռնեք,
Ձեր թռիչքի ժամանակ ինձ բացակա չդնեք...
Ձեր պնդության պատճառով դուք աշխարհներ կսնեք,
Իմ մեղմության պատճառով ինձ բացակա չդնեք...
Ես եմ քարե պատարագ ձեզնից սերված ընդունեք,
Դուք ձեր կամքի ն հակառակ ինձ բացակա չդնեք...

Ոչ խոստումներ, ոչ երդում չսպասեք ու չքննեք,
Անվերջ, անշարժ ձեր երթում ինձ բացակա չդնեք...[5]

Հաջորդը կածանն է, որ հանդես է եկել մի քանի ժողովածուներում՝ անընդհատ փոփոխվելով և հանդես գալով տարբեր դրսևորումներով հատկապես «Քարափների երգը» ժողովածուում.

Քար ու քերծից երգ է խլում,
Գլուխը կախ գնում, գնում,
Լորագետից ջուր է խմում
Ծարավ կածանը:

Այս դրվագում կածանը, որ ժայռերի միջով անցել ու հասել է գետակին, մարդու հետ իր բարեկամության սկիզբն է դրել միայն: Հետո մարդու ոտնահետքերով բացված կածանը խորապես ճանաչել է իր ստեղծողին և տարածել-հասցրել է ջրի ափ ու հագեցրել է նրա ծարավը: Սակայն այդքանով իր դերը չի ավարտել կածանը: Երբ մարդու ոտքը դիպել է նրա ծնկի ծալին, կենդանացել, «կանաչ-կարմիր է կապել պառավ կածանը», մի տեսակ մոռացել է իր տարիքը, որ կարող է հազար տարուց ավելի լինել: Եվ ամենակարևորը, մարդկանց բարություն անելով, կածանը ոչինչ չի պահանջել որպես փոխհատուցում: Կածանը նաև բանաստեղծի հոգում հուշեր է արթնացրել որպես մանկության օրերի ընկեր ու բնության հետ կապող օղակ, որից կտրվելը ուղղակի անհնարին է: Հետո, ավելի խոր իմաստ է ստանում կածանը և «Սեզամ, բացվիր» ժողովածուում կրում հսկայական պատմաճանաչողական իմաստ՝ գեղարվեստական լայն համապատկերի վրա.

Ի՞նչ է ասում ճամփորդներին
Հալված-մաշված այս կածանը,
Ժամանակին հազար ու մի
Քայլեր հաշված այս կածանը,
Անցող-դարձող քարավանի
Ծանր ու դանդաղ ոտքերի տակ
Մեջքը կոտրած, կուրծքը պատռած
Հոգնած-տանջված այս կածանը,
Մեծ աշխարհի մեծաժխոր
Ճանապարհից հեռու քաշված,
Հիսուսի պես ապառաժի
Կողքին խաչված այս կածանը:

[5]*http://library.hayreniq.ru/armyanskie_pisateli/hamo_sahyan*

Այստեղ Հայաստանի բնանկարի մասը կազմող կածանը արդեն իր երկրի պատմության ականատեսն ու վկան է, իր ժողովրդին դարերի հետ կապող առհավատչյան՝ ինչպես ամենուր սփռված վանքերն ու մատուռները, եկեղեցիներն ու խաչքարերը: Կածանը «հիշողության» մեջ պահել է իր մեջքով անցած մարդկանց, ճանապարհորդների, ինչպես նաև նվաճողների, հրոսակների ու թշնամիների ոտնահետքերը: Բայց կածանը նաև Հայաստանի ճակատագիրն է, նրա բզկտված, «հոգնած-տանջված» էությունը՝ հար և նման Հիսուսի ողբերգությանը, նրա Գողգոթային:

«Ինձ բացակա չդնեք» (1998) ժողովածուում կածանը արդեն երևում է իր գերագույն «դերակատարությամբ»: Մանկության «թելիկ-թելիկ, պարան-պարան» կածանը արդեն բանաստեղծի հուշերի կամուրջը չէ դեպի բնություն: Այն բանաստեղծի վերջին ճանապարհի ուղեկիցն է, որ պիտի տանի մինչև սարի գագաթ, դեպի հավիտենական ննջատեղի: Այստեղ բանաստեղծն ու կածանը նույնանում են, մարդիկ շփոթում են նրանց անունները, և կածանը դառնում է բանաստեղծի կենսագրության տողը.

էլ մնաս բարով…ժամն է լռելու
Խոնարհվիր, շողա որպես ծիածան,
Այս հողի վրա, այս լեռան կողին…
Կենսագրություն ես չեմ գրելու,
Ապրած իմ կյանքն էլ պատմիր դու, կածան,
Ինձանից հետո աշխարհ եկողին:

…Նմանատիպ խորհուրդով է ապրում Համո Սահյանի բանաստեղծության մեջ նաև մասրենին: Հայաստանի լեռնային բնապատկերի անբաժան մասը կազմող մասրենին նաև վայրի վարդ է անվանվում, որովհետև նա չի ընտելանում, ամենակարող մարդը նրան չի կարողանում հնազանդեցնել: Երբ այդպիսի փորձ է արվում, մասրենու մեջ արթնանում է բնազդը, և նա տենդորեն սկսում է նվաճել շրջապատը՝ չխնայելով հողն ու ժայռը, որպես բողոք ընդվզելով նաև բոլոր մշակաբույսերի դեմ: Մասրենին չի ուզում քաղաքակրթվել, նա ցանկանում է մնալ իր նախաստեղծ տեսքով՝ որպես քարափների ու անտառի գեղեցկության միջուկ:

«Քարափների երգում» նա ընդամենը բնապատկերային տարր է: Մի դեպքում որպես «կարմիր սարսուռ», նրա պտուղը կաթում է ժայռից, մի դեպքում որպես աշնան ուլունք-ուլունք խորհրդանշան՝ ջրերն են տանում նրան: Ժայռն առայժմ մասրենու համար և՛ հող է, և՛ երկինք: Սակայն դրանք ընդամենը անծանոթ ընթերցողին մասրենու բնույթի հետ մտերմացնելու քայլեր են, մինչև որ նա կփորձի թափանցել մասրենուն տրված «դարերի» խորքը: Մասրենին դառնում է բնության հետ շփման, մարդկային էության բացահայտման միջոց: Եվ երբ մասրենու պտուղը

քաղող չի լինում, նա «փշոտ քնքշանքը» փնտրող, նրա «փշոտ խոնարհությունը» գնահատող չի լինում, ապա նույնն է, թե չզգաս գեղեցկուհի կնոջ հմայքը, որին այրում է իր կրքերի կրակը, մենավոր ժայռից կախված՝ նա դառնում է այրի:
Մասրենին նաև մարդկային մեղքերից մաքրվելու և մարդկային ցավերն ամոքելու սպեղանի է.

էլ ցավիս ցավ չեմ ասի,
Թե վայրի քո ծաղկունքից
Սպիտակ մի թերթ պոկեմ,
Որ դնեմ վերքիս վրա:

Մասրենու ամբողջությունը, նրա տեսակը չի աղավաղվում, որովհետև նա աշխարհի անցուդարձի մեջ չէ, ոչ ոքից ոչինչ չի սպասում, ամեն տարի ծաղկում է, պտուղ տալիս և իր «պահվածքով» զարմանք առաջացնում.

Ծաղկում ես ամեն տարի,
Բուրմունքդ հովին տալով,
Նեկտարդ մեղվին տալով,
Պտուղդ՝ ում պատահի:

Երբ ձմեռը գալիս, ինքն ամփոփվում է իր մեջ, պաշարում հողից վերցրած ուժը, որպեսզի գարնանը կրկնվի և շարունակվի այն առաքելությունը, որ նրան ընծայել է բնությունը: Դրա համար էլ բանաստեղծը զարմանալի նմանություն է տեսնում իր և մասրենու միջև.

Տեսնու՞մ ես, թե ես ու դու
Ինչքան ենք իրար նման:

Համո Սահյանի մոտ բնությունից ստացած մարդկային գծերի ամբողջության մեջ կա նաև մասրենու գենը՝ նրա «փշոտ խոնարհությունը»: Հենց դրանից էլ ստեղծվում է մասրենու ամբողջական կերպարը: «Դաղձի ծաղիկ» ժողովածուն ավարտվում է «Մասրենու մենախոսությունը» բանաստեղծությամբ, որտեղ «ժայռի ծիծ կերած» մասրենին ներկայանում է որպես մարդկային հատկանիշներով օժտված բնության ֆենոմեն, որպես մարդկային ապրելակերպի ստուգանմուշ: Դա «տանջված, համբերած, ամեն ինչ ներած» անհատակություն է, որն իր կյանքի մայրամուտին մահկանացուներին խորհուրդ է տալիս.

Թող աշնան քամին թերթերս ցրի,
Իսկ դուք քաղեցեք պտուղս ձրի,
Եվ մի ասեք, թե ձմռան սեմին եմ,
Աղն եմ ձեր կենաց, ձեր մասրենին եմ:

Եթե կածանն ու մասրենին կարող են, իրոք, բանաստեղծական այդքան խոր եզրահանգումների նյութ դառնալ, մի քիչ գոնե հասկանալի է: Բայց Համո Սահյանը այդ հարթության վրա է բերում նաև արտաքինից աննշան թվացող տերևին.

Ամեն տերև մի աշխարհ է աշխարհում,
Քանի՞ աշխարհ տարավ աշունն աշխարհից…
Ո՞վ շահեց, ո՞վ տանուլ տվեց այս խաղում,
Եվ ո՞վ կա, որ գլուխ հանի այս խաղից:

Գեղարվեստական նույն սկզբունքներով տերևի հետ բանաստեղծականացվում են նաև բնության այլ երևույթներ, տարրեր ու պատառիկներ, որոնք ամբողջանում են մարդկային հատկությունների ծիածանումներով.

Տերևը՝
Ես նրա ջանքն եմ առեղծվածային,
Առեղծվածային նրա կյանքն եմ ես:
Հավքը՝
Ես անրջանքն եմ նրա թևավոր,
Նրա թևավոր ներշնչանքն եմ ես:
Առվակը՝
Ես տառապանքն ու տանջանքն եմ նրա,
Եվ նրա մաքուր խղճմտանքն եմ ես:
Արտը՝
Ես հասկավորման խորհուրդն եմ նրա,
Նրա շշուկներն ու ծըփանքն եմ ես:
Քարանձավը՝
Ցուրտ ամայության սարսուռը նրա
Եվ շուրթից կախված հառաչանքն եմ ես:

Այս շարքը կարելի է շարունակել և ուղիղ, և հակադարձության օրենքներով, որի մեջ կարող ենք տեսնել մի ամբողջ պատկերասրահ (սար ու ձոր, քամի ու անտառ, ծիածան ու ամպ, գետակ ու աղբյուր, ծառ ու ծաղիկ), որտեղ կան գեղարվեստական յուրահատկության և գեղագիտական որակի բազմակողմանի սքանչելի սահյանական բացահայտումներ:
Իսկ ի՞նչ է բնությունը բանաստեղծի համար: Նրա համար քարափը միայն քարափ չէ, ձորը միայն ձոր չէ, այլ աշխարհ, երկինք, քարերը, աստղերը՝ իր հայրենակիցները:

Բնությունը մարդկայնորեն զգայուն է, որ ունի սիրտ, հոգի, լսողություն, այն կարող է զայրանալ իրեն դիպչող կոպտությունից: Բնությունը սիրելու համար պետք է լսել նրա ձայնը, ծուլվել նրա էությանը:

Մինչ Սահյանը բնության թեմայով ստեղծագործողներ էլի են եղել, սակայն Սահյանն առաջինն էր, որ անձնավորեց բնությունը, նրան տվեց մարդուն լսելու, նրա հետ երկխոսելու, նրա վշտերին կարեկից լինելու և նրա հետ պատմության քառուղիներով քայլելու, ինչպես նաև մարդկային զգացողություններով ապրելու կարողություն, այսինքն, մարդը և բնությունը նրա բանաստեղծություններում հանդես են գալիս միասին և նրանց հնարավոր չէ առանձնացնել:

Այժմ փորձենք խիզախել և Սահյանի մի քանի բանաստեղծություններում տարանջատենք մարդուն բնությունից, իսկ բնությունը՝ մարդուց: Արդյո՞ք դա մեզ կհաջողվի:

Վերցնենք Համո Սահյանի թերևս ամենահայտնի բանաստեղծությունը՝ «Անտառում»-ը:

«Անտառում» բանաստեղծությունը պեյզաժ է անվանված, սակայն այն շատ հեռու է սոսկ բնապատկեր լինելուց:

Անտառում ամպի ծվեններ կային,
Կապույտ մշուշներ կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում,
Շշուկներ կային անտառում այնքա՜ն,
Եվ խոնավ-խոնավ բուրմունքներ կային…
Իրար փաթաթված ստվեր ու կածան,
Ու հետքե՜ր, հետքե՜ր, հետքե՜ր մարդկային…

Փորձենք տարբեր հարցադրումներով ընթերցել և վերլուծել այս սքանչելի «բնապատկեր»-ը, ինչ կլինի, եթե մենք այն ընկալենք միայն որպես աշնանային անտառի նկարագիր: Այդ դեպքում բանաստեղծությունը կկորցնի իր իմաստն ու արժեքը: Այստեղ բոլորն ու ամեն ինչ օժտված են մտածելու, զգալու ընդունակությամբ: Մարդուն առարկայական աշխարհից զատող սահմանագիծը ջնջված է: Դրա համար էլ անտառն ապրում ու շնչում է՝ լի մարդկային հետքերով, արձագանքներով ու շշուկներով: Համո Սահյանի համար շատ բնորոշ է մարդ-բնություն կապի նման վերծանումը՝ մարդը մերվում է բնությանը, վերածվելով աստղի, գետի, անտառի, իսկ բնությունը մարդկայնանում է՝ «քունը չի տանում»:

Բանաստեղծությունը վերլուծելիս մենք կարող ենք նույնիսկ ավելի խորը գնալ և ամեն ինչ ընկալել որպես խորհրդանիշներ. բնապատկերը կարծես տեղի է տալիս, սկսում ես մտածել – գուցե խոսքը տարեց, բայց հոգեհարուստ մարդու մասին է, մարդ՝ որին աշնանային տարիքն արդեն օրոր է

ասում, բայց նրա քունը չի տանում, որովհետև հոգում դեռ կան խորին խորհուրդներ, որովհետև շուրջն ապրում է արթուն կյանքը: Եվ ինչպե՞ս քնի, երբ աշնանը, բնականաբար հաջորդելու է ձմեռը, ու ամեն ինչ խորը քուն է մտնելու ճերմակահեր ծածկոցի տակ:

Այժմ փորձենք ավելի ընդլայնել շրջանակները. կարող է լինել և այսպիսի վերլուծություն՝ «անտառ»-ը աշխարհն է, որը քնելու, նույնիսկ նիրհելու իրավունք չունի, որքան էլ օրոր ասեն նրան: Մենք տեսանք, որ անհնար է տարանջատել մարդ – բնություն միասնությունը: Ի վերջո, այսօր այն բոլոր բացասական երևույթները, ինչ որ կատարվում է մեր շուրջը, ճիշտ չեն և պետք է պաշտպանել ու պահպանել բնությունը, որով պայմանավորված է մեր գոյությունը, չէ՞ որ առանց բնության հնարավոր չէ ապրել:

Սահյանի բնափիլիսոփայությունը հարուստ է ենթատեքստով, բազմազան է, գունագեղ: Բնության տարբեր պահերը, տարրերն ու երևույթները՝ առավոտներն ու մայրամուտները, սարերն ու ձորերը, գետերն ու ջրվեժները, ծիածաններն ու աղբյուրները, ամեն ինչ շնչավորվել են Սահյանի գրչի տակ, ծիածանվել բոլոր գույներով և ստացել երկրորդ՝ հավիտենական կյանք արվեստի մեջ:

Եզրակացություն

Հայ բանաստեղծների շարքում առանձնանում է Համո Սահյանը, որին հաջողվել է ամենապարզ բառերով և այնքան իրատեսորեն նկարագրել հայ բնաշխարհը, բացահայտել նրա սքողված հմայքը, ուժն ու ձգողականության առեղծվածը, ինչպես նաև տալ հայ մարդու բնութագիրը, թերևս, այնքան դիպուկ, որ մինչ օրս շատ քչերին է հաջողվել: Ավելին, նրա պոեզիան նաև անձնական ապրումների ու մտորումների մի փունջ է, որտեղ պարփակված է ուրույն փիլիսոփայություն, և ես կարծում եմ, որ Սահյանին ամեն տարիքում ընթերցելիս տարբեր ես ընկալում և ամեն անգամ նոր խորություն ես տեսնում տաղանդաշատ գրողի տողերում... Այս թեման կօգնի սովորողների մոտ դրսևորել ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն, ինչը շատ համապատասխան է նրանց արժեհամակարգի ձևավորմանը թե՛ հիմնական, թե՛ ավագ դպրոցում Համո Սահյանի բանաստեղծություններն ուսումնասիրելիս, երբ դրանց նրբիմաստներն անցնում են սեփական հոգու մանրաթելերով: Բնությունն ազնվացնում է մարդուն, սրբագործում նրա էությունը, ազնվացնում հուզաշխարհը: Անհրաժեշտ է վերանայել մարդկանց այսօրվա վերաբերմունքը բնության հանդեպ, պահել և պահպանել, արժևորել բնությունը, քանի որ առանց նրա մարդը չի կարող ապրել ու գոյատևել: Այս մոտեցումը կնպաստի սովորողների մշակութային կարողունակության զարգացմանը, քանի որ մարդու ամեն արարք, ամեն քայլ պահանջում է ցուցաբերել համապատասխան վերաբերմունք և դիրքորոշում, որոնք էլ ձևավորում են մշակույթ՝ ՄԱՐԴ - ԲՆՈՒԹՅՈՒՆ փոխհարաբերության և փոխըմբռնման մշակույթ: Կարծում եմ, որ վերժամանակյա է Համո Սահյանի կատարած աշխատանքը, և նա արժանի է մեծ գնահատանքի և արժևորման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Աղաբաբյան - «Արդի բանաստեղծության դիմագիծը», «Գրական թերթ», 1974թ.

2. Դ. Գասպարյան - «Համո Սահյան. կյանքը և ստեղծագործությունը»,Երևան 2003 թ.

3. Ա.Հայրապետյան-«Բնությունը և մարդը Համո Սահյանի պոեզիայում»,Երևան 1974թ.

4. Հ. Սահյան– Իսկականը և կեղծը, «Գրական թերթ», 1962թ.

5. Համո Սահյան - «Իրիկնահաց», Երևան, 1977թ.

6. Համո Սահյան - «Սեզամ, բացվի՛ր», Երևան, 1972թ.

7. https://library.hayreniq.ru/armyanskie_pisateli/hamo_sahyan